

Ապարանի ավագ դպրոցում բացվեց ռազմամարզական հրապարակ

ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի եւ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի նախաձեռնությամբ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում իրականացվում է ռազմամարզական հրապարակների կառուցում:

Առաջին խաղահրապարակը բացվել էր Աշտարակի Պերճ Պոռչյանի անվան թիվ 3 դպրոցում, որով պայմանավորված՝ կրթօջախում բարձր հիմքերի վրա է դրված ռազմահայրենասիրական դաստիարակությունը:

Հոկտեմբերի 2-ին հանդիսավոր արարողությամբ բացվեց Ապարանի ավագ դպրոցի ռազմամարզական հրապարակը: Այն իր մեջ ներառում է 10 մարզաձևի վարժասարքեր, որոնք լիովին բավարարում են ժամանակակից չափանիշները:

Հանդիսությանը ներկա փոխմարզպետ Նունե մովսիսյանը հնչեցրեց մարզպետի ողջույնի խոսք, որտեղ կարեւորվեց ավագ դպրոցում նման կառույցի ստեղծումը, քանի որ այստեղ սովորած տղաները լիովին պատրաստ են ծառայության եւ լիարժեքորեն կարող են համալրել բանակի շարքերը թե՛ ֆիզիկապես. եւ թե՛ ՆՁՊ գիտելիքների իմացությամբ:

Հնչեցին նաեւ շնորհավորանքի այլ ելույթներ: Ապարանի քաղաքապետ Գոռ Աբրահամյանը եւ Ավագ դպրոցի տնօրեն Նվարդ Բարսեղյանը պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվեցին «Վազգեն Սարգսյան», մեդալով: